

**Կերային նյութերի կատալոգը ստեղծող՝ Հանձնաժողովի 2010 թվականի  
մարտի 19-ի թիվ 242/2010 կանոնակարգ (ԵՄ)**

(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)

*Պաշտոնական տեղեկագիր, L 077, 24.03.2010թ., էջ 0017 - 0032*

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական միության գործունեության մասին»  
պայմանագիրը,

հաշվի առնելով Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի՝ 1831/2003 (ԵՀ)  
փոփոխող եւ Խորհրդի՝79/373/ԵՏՀ հրահանգն ուժը կորցրած ճանաչող՝ «Կերի  
շուկայահանման եւ օգտագործման մասին» Եվրոպական պառլամենտի եւ  
Խորհրդի 2009 թվականի հուլիսի 13-ի թիվ 767/2009 կանոնակարգը (ԵՀ),  
Հանձնաժողովի՝ 80/511/ԵՏՀ հրահանգը, Խորհրդի՝ 82/471ԵՏՀ, 83/228/ԵՏՀ,  
93/74/ԵՏՀ, 93/113/ԵՀ եւ 96/25/ԵՀ հրահանգները, Հանձնաժողովի՝  
2004/217/ԵՀ<sup>1</sup> որոշումը եւ, մասնավորապես, վերջինիս 24(2) հոդվածը,

Սննդի շղթայի եւ կենդանիների առողջության հարցերով մշտական կոմիտեի  
հետ խորհրդակցելուց հետո,

Քանի որ

1) թիվ 767/2009 կանոնակարգի (ԵՀ) 24-րդ հոդվածով նախատեսվում է  
ստեղծել կերային նյութերի կատալոգ,

2) հետեւաբար, անհրաժեշտ է ստեղծել այդ կատալոգի անդրանիկ  
տարբերակը,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

---

<sup>1</sup> ՊՏ L 229, 01.09.2009թ., էջ 1:

## **Հոդված 1**

Ստեղծվում է թիվ 767/2009 (ԵՀ) կանոնակարգի 24-րդ հոդվածում նշված կերային նյութերի կատալոգ՝ համաձայն հավելվածում ներկայացված ձեւի:

## **Հոդված 2**

Սույն Կանոնակարգն ուժի մեջ է մտնում Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուց հետո 20-րդ օրը:

Կիրառելի է 2010 թվականի սեպտեմբերի 1-ից:

Սույն Կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր է անմիջականորեն կիրառելի է բոլոր անդամ պետություններում::

Կատարված է Բրյուսելում, 2010 թվականի մարտի 19-ին:

Հանձնաժողովի կողմից՝

Նախագահ

Խոսե Մանուել Բառոսո

ՀԱՎԵԼՎԱԾ

ԿԵՐԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԿԱՏԱԼՈԳ

ԲԱՌԱՐԱՆԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Ներքոբերյալ բառարանն առնչվում է հավելվածում նշված կերային նյութերի պատրաստման համար անհրաժեշտ հիմնական գործընթացներին: Եթե կերային նյութերի անվանումներում առկա են այս բառարանից տրված ընդհանուր կամ հատկորոշիչ անուններ, կիրառման ենթակա գործընթացը պետք է համապատասխանի տրված սահմանմանը:

| Գործընթաց | Սահմանում | Ընդհանուր անուն/հատկորոշիչ անուն |

(1) | (2) | (3) | (4) |

1 | Կոնցենտրացիա [1] | Որոշակի բաղադրանյութերի ավելացում ջրի կամ այլ բաղադրիչների հեռացմամբ | Կոնցենտրատ |

2 | Կեղեւազատում [2] | Հացահատիկների, սերմերի, մրգերի, ընկույզների եւ այլնի արտաքին շերտի ամբողջական կամ մասնակի շերտատում | Կեղեւազատված, մասնակի կեղեւազատված |

3 | Չորացում | Հիդրատացում արհեստական բնույթի կամ բնական գործընթացներով | Չորացրած (արեւային կամ արհեստական չորացում) |

4 | Լուծամզում (էքստրակցիա), | Որոշակի նյութերից ճարպի կամ յուղի հեռացում օրգանական լուծիչի միջոցով կամ շաքարի ջրային լուծիչի կամ ջրում լուծելի այլ բաղադրիչների միջոցով: Օրգանական լուծիչի օգտագործման դեպքում տվյալ արտադրանքը պետք է տեխնիկապես զերծ լինի նման լուծիչից | Լուծամզված (յուղ պարունակող նյութերի դեպքում), մաթ, միջուկ (շաքար կամ այլ ջրալույծ բաղադրիչներ պարունակող արտադրանքի դեպքում) |

5 | Արտամղում | Նյութի սեղմումը բացվածքից ճնշման ներքո: (Տե՛ս նաեւ նախնական դոնդողացում) | Արտամղված |

6 | Շերտավորում | Ջերմամշակման ենթարկված, խոնավ նյութի փաթաթում | Շերտեր |

7 | Այլուրի աղացման գործընթացը | հացահատիկի ֆիզիկական մշակում մասնիկների չափը փոքրացնելու եւ բաղկացուցիչ մասերի բաժանելը դյուրին դարձնելու նպատակով (գլխավորապես այլուր, թեփ պարունակող խոշոր աղացվածքի այլուր) | Այլուր, թեփ, թեփ պարունակող խոշոր աղացվածքի այլուր [3], կեր |

8 | Ջերմամշակում | Ընդհանուր տերմին, որով նշվում են հատուկ պայմաններում իրականացված մի շարք ջերմամշակումներ՝ ներգործելու նյութի սննդարար արժեքի կամ կառուցվածքի վրա | տապակած, եփած, ջերմամշակված |

9 | Հիդրոգենացում | Սակավ հազեցած գլիցերիդների փոխակերպումը հազեցած գլիցերիդների (յուղերի եւ ճարպերի) | Կոշտացված, մասնակի կոշտացված |

10 | Ջրատարրալուծում | Տարրալուծումը պարզ քիմիական բաղադրիչների՝ ջրով եւ ֆերմենտներով կամ թթվով/ալկալիով համապատասխան մշակմամբ | Ջրատարրալուծված |

11 | Սեղմում [4] | Յուղով հազեցած նյութերից ճարպի/յուղի կամ մրգերից կամ այլ բանջարաբոստանային կուլտուրաներից հյութի հեռացումը մեխանիկական եղանակով (պտուտակահանով կամ այլ տեսակի սեղմումով), թեթեւ ջերմության ներքո կամ առանց դրա | Անջատիչ [5] (յուղ պարունակող նյութերի դեպքում), միջուկ, մնացուկներ (մրգերի դեպքում եւ այլն), սեղմված միջուկ (շաքարի ճակնդեղի դեպքում) |

12 | Հատիկավորում | Կոմպրեսիայով կատարվող հատուկ ձեւավորում խորանարդիկի միջոցով | Հատիկ, հատիկավորված |

13 | Նախնական դոնդողացում | Օսլայի ձեւափոխումը՝ սառը ջրում օսլայի ուռչելու հատկությունները զգալիորեն բարելավելու նպատակով | Նախնական մակարդակում դոնդողացված [6], ուռչած |

14 | Զտում | Շաքարում, յուղերում, ճարպերում եւ այլ չեզոք նյութերում խառնուրդների ամբողջական կամ մասնակի հեռացում քիմիական կամ ֆիզիկական մշակմամբ | Զտված, մասնակի զտված

15 | Խոնավ աղացման գործընթաց | Օսլայի էքստրակցիայի նպատակով հատիկի/հացահատիկի բաղադրիչ մասերի մեխանիկական անջատումը, երբեմն ջրում թրջելուց հետո՝ ծծմբի երկօքսիդով կամ առանց դրա՝ Սաղմ, սնձան, օսլա |

16 | Մանրացում | Հացահատիկի կամ այլ կերային նյութերի մեխանիկական մշակումը դրանց չափսը փոքրացնելու նպատակով | Մանրեցված, մանրացում |

17 | Շաքարազերծում | Քիմիական կամ ֆիզիկական միջոցներով մոնոսախարիդի եւ դիսախարիդի լրիվ կամ մասնակի հեռացումը մրգահյութից եւ շաքար պարունակող այլ նյութերից | Շաքարազերծված, մասնակի շաքարազերծված |

Հիմնական կերային նյութերի ոչ ամբողջական ցանկը

1. ՁԱՎԱՐԵՂԵՆ, ՁԱՎԱՐԵՂԵՆԻՑ ԱՐՏԱԴՐԱՆՔ ԵՎ ԵՆԹԱՄԹԵՐՔՆԵՐ

Համարը | Անվանումը | Նկարագրությունը | Պարտադիր հայտարարագրերը |

(1) | (2) | (3) | (4) |

1.01 | Վարսակ | Ցանովի վարսակի (*Avena sativa* L) հատիկներ եւ վարսակի մշակաբույսերի այլ սորտեր | |

1.02 | Վարսակի փաթիլներ | Թեփահանված վարսակի շոգեհարումից եւ փաթաթումից ստացվող արտադրանք: Այն կարող է պարունակել վարսակի թեփի փոքր չափաբաժին | Օսլա |

1.03 | Վարսակի մանրուք | Ենթամթերք, որն ստացվում է, երբ ստուգված, թեփահանված վարսակը դարձվում է վարսակաձավար եւ այլուր՝ ենթարկվելով մշակման: Այն հիմնականում բաղկացած է վարսակի թեփից եւ որոշ էնդոսպերմերից | Հում թաղանթանյութ |

1.04 | Վարսակի թաղանթ եւ թեփ | Ենթամթերք, որն ստացվում է, երբ ստուգված վարսակը դարձվում է վարսակաձավար՝ ենթարկվելով մշակման: Այն բաղկացած է հիմնականում վարսակի թաղանթներից եւ թեփից | Հում թաղանթանյութ |

1.05 | Գարի | Սովորական գարու հատիկներ | |

1.06 | Գարու մանրուք | Ենթամթերք, որն ստացվում է, երբ ստուգված, թեփահանված գարին դարձվում է գարեծավար, սպիտակածավար կամ այլուր՝ ենթարկվելով մշակման: | Հում թաղանթանյութ |

1.07 | Գարու սպիտակուց | Օսլայի արտադրությամբ չորացված գարուց ենթամթերք Այն բաղկացած է հիմնականում օսլայի անջատումից ստացված սպիտակուցից | Անմշակ սպիտակուց, Օսլա |

1.08 | Բրինձ, մանրացված/փշրած | *Oryza sativa L* տեսակի բրնձի հղկման կամ մաքրման արդյունքում գոյացած ենթամթերք: Այն բաղկացած է հիմնականում սովորականից փոքր եւ (կամ) մանրացված/փշրած հատիկներից | Օսլա |

1.09 | Բրնձի թեփ (շագանակագույն) | Կեղեւահանված բրնձի առաջին հղկումից գոյացած ենթամթերք: Այն բաղկացած է հիմնականում ալեյրոնային (հացահատիկի սպիտակուցային գոյացություն) շերտի մասնիկներից, էնդոսպերմից եւ սաղմից | Հում թաղանթանյութ |

1.10 | Բրնձի թեփ (սպիտակ) | Կեղեւահանված բրնձի հղկումից գոյացած ենթամթերք: Այն բաղկացած է հիմնականում ալեյրոնային (հացահատիկի սպիտակուցային գոյացություն) շերտի մասնիկներից, էնդոսպերմից եւ սաղմից | Հում թաղանթանյութ |

1.11 | Բրնձի թեփ՝ կալցիումի կարբոնատով | Կեղեւահանված բրնձի հղկումից գոյացած ենթամթերք: Այն բաղկացած է հիմնականում թափանցիկ նրբաթաղանթից, ալեյրոնային (հացահատիկի սպիտակուցային գոյացություն) շերտի մասնիկներից, էնդոսպերմից եւ սաղմից, պարունակում է կալցիումի կարբոնատի փոփոխվող քանակներ, որոնք առաջանում են հղկման գործընթացից | Հում թաղանթանյութ, կալցիումի կարբոնատ |

1.12 | Կոշտ անասնակեր՝ շոգեմաքրված բրնձից | Կեղեւահանված, արագ եփվող բրնձի հղկումից գոյացած ենթամթերք: Այն բաղկացած է հիմնականում թափանցիկ նրբաթաղանթից, ալեյրոնային (հացահատիկի սպիտակուցային գոյացություն) շերտի մասնիկներից, էնդոսպերմից եւ սաղմից, պարունակում է կալցիումի կարբոնատի փոփոխվող քանակներ, որոնք առաջանում են հղկման գործընթացից | Հում թաղանթանյութ, կալցիումի կարբոնատ |

1.13 | Աղացված կոշտ անասնակեր՝ բրնձից | Կոշտ անասնակերի բրնձի աղացվածքից ստացվող մթերք, որը բաղկացած է բրնձի կանաչ, այլուրանման կամ չհասունացած հատիկներից, որոնք գոյացել են կեղեւապատ բրնձի աղացման գործընթացից, կամ դեղին կամ բժավոր, սովորական կեղեւահանված հատիկներից | Օսլա

1.14 | Բրնձի սաղմ, էքսպելեր, | Յուղային արտադրության ենթամթերք՝ ստացված բրնձի սաղմի մամլումից, որում կարող են առկա լինել էնդոսպերմի եւ արտաքին թաղանթի մասեր | Հում սպիտակուց, հում ճարպ, հում թաղանթանյութ |

1.15 | Բրնձի սաղմ, լուծամզված | Յուղային արտադրության ենթամթերք՝ ստացված բրնձի սաղմի լուծամզումից, որում կարող են առկա լինել էնդոսպերմի եւ արտաքին թաղանթի մասեր | Հում սպիտակուց |

1.16 | Բրնձի օսլա | Տեխնիկապես մաքուր բրնձի օսլա | Օսլա |

1.17 | Կորեկ| Ցանովի կորեկի հատիկներ | |

1.18 | Աշորա | Ցանովի աշորայի հատիկներ | |

1.19 | Վարսակի մանրուք [7] | Այլուրի արտադրության ենթամթերք, որը ստացվել է ստուգման ենթարկված աշորայից: Այն բաղկացած է հիմնականում էնդոսպերմի մասնիկներից, արտաքին թաղանթների չնչին կտորներից եւ որոշ քանակի հացահատիկի մնացուկներից | Օսլա |

1.20 | Աշորայից ստացված կեր | Այլուրի արտադրության ենթամթերք, որն ստացվել է ստուգման ենթարկված աշորայից: Այն բաղկացած է հիմնականում արտաքին թաղանթի կտորներից եւ հատիկի այնպիսի մասնիկներից, որոնցից, աշորայի թեփի համեմատությամբ, հեռացվել է էնդոսպերմի առավել քիչ քանակություն | Օսլա |

1.21 | Աշորայի թեփ | Այլուրի արտադրության ենթամթերք, որն ստացվել է ստուգման ենթարկված աշորայից: Այն բաղկացած է հիմնականում արտաքին թաղանթի կտորներից եւ հատիկի այնպիսի մասնիկներից, որոնցից էնդոսպերմի մեծ մասը հեռացվել է | Հում թաղանթանյութ |

1.22 | Սորգո | *Sorghum bicolor* L. Moench s.l.–ի հատիկներ | |

1.23 | Յորեն | Փափուկ ցորենի հատիկներ, *Desf.*կարծր ցորենի եւ ցորենի մշակաբույսերի այլ սորտեր | |

1.24 | Յորենի մանրուք [8] | Այուրի արտադրության ենթամթերք, որն ստացվել է ստուգման ենթարկված ցորենի հատիկներից կամ թեփահանված ցորենից: Այն բաղկացած է հիմնականում արտաքին թաղանթի չնչին կտորներով էնդոսպերմի մասնիկներից եւ որոշ քանակի հացահատիկի մնացուկներից:

1.25 | Յորենից ստացված կեր | Այուրի արտադրության ենթամթերք, որն ստացվել է ստուգման ենթարկված ցորենի հատիկներից կամ թեփահանված ցորենից: Այն բաղկացած է հիմնականում արտաքին թաղանթի կտորներից եւ հատիկի այնպիսի մասնիկներից, որոնցից, ցորենի թեփի համեմատությամբ, հեռացվել է էնդոսպերմի առավել քիչ քանակություն | Հում թաղանթանյութ |

1.26 | Յորենի թեփ [9] | Այուրի արտադրության ենթամթերք, որն ստացվել է ստուգման ենթարկված ցորենի հատիկներից կամ թեփահանված հաճարից: Այն բաղկացած է հիմնականում արտաքին թաղանթի կտորներից եւ հատիկի այնպիսի մասնիկներից, որոնցից էնդոսպերմի մեծ մասը հեռացվել է | Հում թաղանթանյութ |

1.27 | Յորենի սաղմ | Այուրի աղացման գործընթացում ստացված ենթամթերք, որը բաղկացած է առավելապես ցորենի սաղմից՝ տափակեցված կամ այլ վիճակով, որոնց վրա կարող են դեռեւս նկատվել էնդոսպերմի մասնիկներ եւ արտաքին թաղանթ | Հում սպիտակուց Հում ճարպ |

1.28 | Յորենի սնձան (սոսնձանյութ) | Յորենի օւլայի արտադրության չորացված ենթամթերք: Այն բաղկացած է հիմնականում օւլայի անջատման ընթացքում ստացված սնձանից | Հում սպիտակուց |

1.29 | Յորենի սնձանից (սոսնձանյութ) ստացված կեր | Յորենի օւլայի եւ սնձանի արտադրության ենթամթերք: Այն կազմված է թեփից, որից մասամբ հեռացվել է սաղմը կամ հակառակը, եւ սնձանից, որին կարող են ավելացվել հատիկի ստուգման արդյունքում գոյացած բաղադրիչների շատ քիչ քանակություն, ինչպես նաեւ օւլայի հիդրոլիզի գործընթացի արդյունքում գոյացած մնացորդների շատ քիչ քանակություն | Հում սպիտակուց, օւլա |

1.30 | Յորենի օւլա | Յորենից ստացված տեխնիկապես մաքուր օւլա | Օւլա |



1.31 | Նախնական դոնդողացման ենթարկված ցորենի օսլա | Ցորենի օսլայից բաղկացած արտադրանք, որը ջերմամշակման արդյունքում մեծ մասամբ ընդարձակվում է | Օսլա |

1.32 | Սպելտա | Հաճարի հատիկներ, երկհատիկ հաճար Շրանկ, մշակովի միահատիկ ցորեն | |

1.33 | Տրիտիկալե | *Triticum X Secale* հիբրիդի հատիկներ | |

1.34 | Եգիպտացորեն | *Zea mays L.* հատիկներ | |

1.35 | Եգիպտացորենի մանրուք [10] | Եգիպտացորենի այլուրի կամ սպիտակաձավարի արտադրության ենթամթերք: Այն բաղկացած է հիմնականում արտաքին թաղանթի կտորներից եւ հատիկի այնպիսի մասնիկներից, որոնցից, եգիպտացորենի թեփի համեմատությամբ, հեռացվել է էնդոսպերմի առավել քիչ քանակություն | Հում թաղանթանյութ |

1.36 | Եգիպտացորենի թեփ | Եգիպտացորենի այլուրի կամ սպիտակաձավարի արտադրության ենթամթերք: Այն բաղկացած է հիմնականում արտաքին թաղանթներից եւ եգիպտացորենի որոշ սաղմից՝ էնդոսպերմի որոշակի մասնիկներով | Հում թաղանթանյութ |

1.37 | Եգիպտացորենի սաղմ, էքսպելեր | Յուղային արտադրության ենթամթերք՝ ստացված չոր կամ խոնավ մշակման ենթարկված եգիպտացորենի սաղմի մամլումից, որում կարող են առկա լինել էնդոսպերմի եւ արտաքին թաղանթի մասեր | Հում սպիտակուց, հում ճարպ |

1.38 | Եգիպտացորենի սաղմ, լուծամզված | Յուղային արտադրության ենթամթերք՝ ստացված չոր կամ խոնավ մշակման ենթարկված եգիպտացորենի սաղմի լուծամզումից, որում կարող են առկա լինել էնդոսպերմի եւ արտաքին թաղանթի մասեր | Հում սպիտակուց |

1.39 | Եգիպտացորենի սնձանից ստացված կեր [11] | Եգիպտացորենի օսլայի խոնավ արտադրության ենթամթերք: Այն կազմված է թեփից եւ սնձանից, որին կարելի է ավելացնել արտադրանքի 15 տոկոսը չգերազանցող քանակությամբ մանրացված եգիպտացորեն՝ ստացված ստուգման արդյունքում եւ (կամ) ակոհոլի կամ օսլայի հիմքով այլ մթերքների արտադրության համար օգտագործվող թրջման ջրի մնացորդները: Արտադրանքը կարող է

պարունակել նաեւ եգիպտացորենի սաղմից յուղի անջատման հետեւանքով գոյացած մնացորդներ, որոնք ստացվում են նաեւ խոնավ արտադրության գործընթացից | Անմշակ սպիտակուցային օսլա, անմշակ ճարպ, եթե > 4,5 տոկոսից |

1.40 | Եգիպտացորենի սնձան (սոսնձանյութ) | Եգիպտացորենի օսլայի արտադրության չորացված ենթամթերք: Այն բաղկացած է հիմնականում օսլայի անջատման ընթացքում ստացված սնձանից | Հում սպիտակուց |

1.41 | Եգիպտացորենի օսլա | Եգիպտացորենից ստացված տեխնիկապես մաքուր օսլա | Օսլա |

1.42 | Նախնական դոնդողացման ենթարկված եգիպտացորենի օսլա [12] | Եգիպտացորենի օսլայից բաղկացած արտադրանք, որը մեծ մասամբ ընդարձակվում է ջերմամշակման արդյունքում | Օսլա |

1.43 | Ածիկի ցողուններ | Ածիկացումից ստացված ենթամթերք, որը բաղկացած է գլխավորապես ծլած հացահատիկների չորացրած արմատիկներից | Հում սպիտակուց |

1.44 | Գարեջրի չորացրած հատիկեղեն | Խմորման ենթամթերք՝ ստացված ածիկացված եւ չածիկացված հացահատիկների մնացորդների եւ օսլա պարունակող այլ մթերքների չորացումից | Հում սպիտակուց |

1.45 | Հացահատիկի ֆերմենտացումից հետո չոր նստվածք [13] | Ալկոհոլի թորման ենթամթերք՝ ստացված ֆերմենտացված հատիկի կոշտ մնացորդների չորացումից | Հում սպիտակուց |

1.46 | Հացահատիկի ֆերմենտացումից հետո պղտոր նստվածք [14] | Ալկոհոլի թորման ենթամթերք՝ ստացված ֆերմենտացված հատիկի կոշտ մնացորդների չորացումից, որին ավելացվել է տակուցքի ռուպ կամ խտացրած տակուցք | Հում սպիտակուց |

2. ԶԻԹԱՏՈՒ ՍԵՐՄԵՐ, ԶԻԹԱՏՈՒ ՊՏՈՒՂՆԵՐ, ՄԹԵՐՔՆԵՐ ԵՎ ԵՆԹԱՄԹԵՐՔՆԵՐ ԶԻԹԱՏՈՒ ՍԵՐՄԵՐԻՑ ԵՎ ՊՏՈՒՂՆԵՐԻՑ

Համարը | Անվանումը | Նկարագրությունը | Պարտադիր հայտարարագրերը |

(1) | (2) | (3) | (4) |

2.01 | Գետնընկույզ, մասնակիորեն կեղեազատված, էքսպելեր | Յուղային արտադրության ենթամթերք, որը ստացվել է մասնակիորեն կեղեազատված Արախիս հիպոգեա L.գետնընկույզի կամ այլ գետնընկույզների մամլումից: (Չոր զանգվածում հում թաղանթանյութի պարունակությունը առավելագույնը 16 տոկոս) | Հում սպիտակուց, հում ճարպ, հում թաղանթանյութ |

2.02 | Գետնընկույզ, մասնակիորեն կեղեազատված, լուծամզվածք | Յուղային արտադրության ենթամթերք, որը ստացվել է մասնակիորեն կեղեազատված գետնընկույզի լուծամզումից: (Չոր զանգվածում հում թաղանթանյութի պարունակությունը առավելագույնը 16 տոկոս) | Հում սպիտակուց, հում թաղանթանյութ |

2.03 | Գետնընկույզ, կեղեազատված, էքսպելեր | Յուղային արտադրության ենթամթերք, որն ստացվել է կեղեազատված գետնընկույզի մամլումից | Հում սպիտակուց, հում ճարպ, հում թաղանթանյութ |

2.04 | Գետնընկույզ, կեղեազատված, լուծամզված | Յուղային արտադրության ենթամթերք, որը ստացվել է կեղեազատված գետնընկույզի լուծամզումից | Հում սպիտակուց, հում թաղանթանյութ |

2.05 | Կանճրակ (հլածուկ) [15] | «*Brassica napus L. ssp. oleifera*»-ի (Metzg.) սերմեր *Sinsk.*, հնդկական *sarson Brassica napus L. Var. Glauca (Roxb.) O.E. Շուլց եւրապե Brassica napa ssp. oleifera (Metzg.) Sinsk.* (Բուսական հումքի նվազագույն մաքրությունը՝ 94 տոկոս) | |

2.06 | Կանճրակ, էքսպելեր [15] | Յուղային արտադրության ենթամթերք, որն ստացվել է կանճրակի սերմերի մամլումից: (Բուսական հումքի նվազագույն մաքրությունը՝ 94 տոկոս) | Հում սպիտակուց, հում ճարպ, հում թաղանթանյութ |

2.07 | Կանճրակ, լուծամզված [15] | Յուղային արտադրության ենթամթերք, որն ստացվել է կանճրակի սերմերի լուծամզումից: (Բուսական հումքի նվազագույն մաքրությունը՝ 94 տոկոս) | Հում սպիտակուց |

2.08 | Կանճրակի թաղանթ | Կանճրակի թաղանթազատման ընթացքում ստացված ենթամթերք | Հում թաղանթանյութ |

2.09 | Գաթալի ծաղիկ ներկարարական՝ սերմեր, մասնակիորեն կեղեւազատված, լուծամզված | Յուղային արտադրության ենթամթերք, որն ստացվել է վայրի քրքումի (*Carthamus tinctorius L.*) մասնակիորեն կեղեւազատված սերմերի լուծամզումից | Հում սպիտակուց, հում թաղանթանյութ |

2.10 | Կոպրա էքսպելլեր | Յուղային արտադրության ենթամթերք, որն ստացվում է հնդկընկույզի (*Cocos nucifera L.*) սերմի չորացրած հատիկի (էնդոսպերմ) եւ արտաքին կեղեւի (թաղանթ, արտաքին ծածկույթ) մամլումից | Հում սպիտակուց, հում ճարպ, հում թաղանթանյութ |

2.11 | Կոպրա, լուծամզված | Յուղային արտադրության ենթամթերք, որն ստացվում է հնդկընկույզի (*Cocos nucifera L.*) սերմի չորացրած հատիկի (էնդոսպերմ) եւ արտաքին կեղեւի (թաղանթ, արտաքին ծածկույթ) լուծամզումից | Հում սպիտակուց |

2.12 | Հնդկընկույզի միջուկ, էքսպելլեր | Յուղային արտադրության ենթամթերք, որն ստացվում է հնդկընկույզի միջուկի (*Elaeis guineensis Jacq., Corozo oleifera (HBK) L. H. Bailey (Elaeis melanococca auct.)* մամլումից, որից հեռացվել է հնարավորինս մեծ քանակությամբ կարծր կեղեւ | Հում սպիտակուց, հում թաղանթանյութ, հում ճարպ |

2.13 | Հնդկընկույզի միջուկ, լուծամզված | Յուղային արտադրության ենթամթերք, որն ստացվում է հնդկընկույզի միջուկի լուծամզումից, որից հեռացվել է հնարավորինս մեծ քանակությամբ կարծր կեղեւ | Հում սպիտակուց, հում թաղանթանյութ |

2.14 | Սոյա (հատիկ), բոված | Մշակովի սոյայի հատիկներ՝ (*Glycine max. L. Merr.*) ենթարկված համապատասխան ջերմամշակման: (Ուրեազայի ակտիվությունն առավելագույնը՝ 0,4 մգ N/g × min.) | |

2.15 | Սոյա (հատիկ), լուծամզված, բոված | Յուղային արտադրության ենթամթերք, որն ստացվել է սոյայի հատիկներից՝ լուծամզումից եւ համապատասխան ջերմամշակումից հետո: (Ուրեազայի ակտիվությունն առավելագույնը 0,4 մգ N/g × min.) | Հում սպիտակուց, հում թաղանթանյութ, եթե > 8 տոկոսից |

2.16 | Սոյա (հատիկ), թաղանթազատված, լուծամզված, բոված | Յուղային արտադրության ենթամթերք, որն ստացվել է թաղանթազատված սոյայի հատիկներից՝ լուծամզումից եւ համապատասխան ջերմամշակումից հետո: (Չոր զանգվածում հում թաղանթանյութի պարունակությունը առավելագույնը 8 տոկոս) (Ուրեազայի ակտիվությունն առավելագույնը 0,5 մգ N/g × min.) | Հում սպիտակուց |

2.17 | Սոյայի (հատիկ) սպիտակուցի կոնցենտրատ | Թաղանթազատված, ճարպը՝ լուծամզված սոյայի հատիկներից, որոնք ենթարկվել են կրկնակի լուծամզման՝ կրճատելու անազոտ լուծամզվածքի մակարդակը | Հում սպիտակուց |

2.18 | Բուսական յուղ [16] | Բույսերից ստացված յուղ | Խոնավություն, եթե > 1 տոկոսից |

2.19 | Սոյայի (հատիկ) թաղանթ | Սոյայի հատիկների թաղանթազատման ընթացքում ստացված ենթամթերք | Հում թաղանթանյութ |

2.20 | Բամբակի սերմ | Բամբակենու (*Gossypium*) սերմացու, որի մանրաթելքը հեռացվել է | Հում սպիտակուց, հում թաղանթանյութ, հում ճարպ |

2.21 | Բամբակի սերմ, մասնակիորեն կեղեւազատված, լուծամզված | Յուղային արտադրության ենթամթերք՝ ստացված բամբակի այն սերմերի լուծամզումից, որոնց մանրաթելքը եւ թեփի որոշ մասը հեռացվել են: (Չոր զանգվածում հում թաղանթանյութի պարունակությունը առավելագույնը՝ 22,5 տոկոս) | Հում սպիտակուց, հում թաղանթանյութ |

2.22 | Բամբակի սերմի էքսպելեր | Յուղային արտադրության ենթամթերք՝ ստացված բամբակի այն սերմերի մամլումից, որոնց մանրաթելքը հեռացվել է | Հում սպիտակուց, հում թաղանթանյութ, հում ճարպ |

2.23 | Նիգեր սերմ, էքսպելեր | Յուղային արտադրության ենթամթերք՝ ստացված *Guizotia abyssinica* (L.f.)-ի սերմերի մամլումից *Cass.* (HCl-ում չլուծվող մոխրի պարունակությունը՝ առավելագույնը 3,4 տոկոս) | Հում սպիտակուց, հում ճարպ, հում թաղանթանյութ |

2.24 | Արեւածաղկի սերմ | Միամյա արեւածաղկի (*Helianthus annuus* L.) սերմեր  
| |

2.25 | Արեւածաղկի սերմ, լուծամզված | Յուղային արտադրության ենթամթերք, որն ստացվել է արեւածաղկի սերմերի լուծամզումից | Հում սպիտակուց |

2.26 | Արեւածաղկի սերմ, մասնակիորեն կեղեւազատված, լուծամզված | Յուղային արտադրության ենթամթերք՝ ստացված արեւածաղկի այն սերմերի լուծամզումից, որոնց թեփի որոշ մաս հեռացվել է: (Չոր զանգվածում հում թաղանթանյութի պարունակությունը առավելագույնը՝ 27,5 տոկոս) | Հում սպիտակուց, հում թաղանթանյութ |

2.27 | Կտավատի սերմ | *Linum usitatissimum L.*-ի սերմեր (Բուսական հումքի նվազագույն մաքրությունը՝ 93 տոկոս) | |

2.28 | Կտավատի սերմ, էքսպելեր | Յուղային արտադրության ենթամթերք, որն ստացվել է կտավատի սերմերի մամլումից: (Բուսական հումքի նվազագույն մաքրությունը՝ 93 տոկոս) | Հում սպիտակուց, հում ճարպ, հում թաղանթանյութ |

2.29 | Կտավատի սերմ, լուծամզված | Յուղային արտադրության ենթամթերք, որն ստացվել է կտավատի սերմերի լուծամզումից: (Բուսական հումքի նվազագույն մաքրությունը՝ 93 տոկոս) | Հում սպիտակուց |

2.30 | Ձիթապտղի խյուս | Յուղային արտադրության ենթամթերք՝ ստացված մամլված *Olea europea L.* ձիթապտուղների լուծամզումից, որից հնարավորին չափով անջատվել է միջուկը | Հում սպիտակուց, հում թաղանթանյութ |

2.31 | Քնջութի սերմ, էքսպելեր | Յուղային արտադրության ենթամթերք՝ ստացված քնջութի՝ *Sesamum indicum L.* բույսի սերմերի մամլումից (HCl-ում չլուծվող մոխրի պարունակությունը՝ առավելագույնը 5 տոկոս) | Հում սպիտակուց, հում թաղանթանյութ, հում ճարպ |

2.32 | Կակաոյի ունդեր, մասնակիորեն կեղեւահանված, լուծամզված | Յուղային արտադրության ենթամթերք՝ ստացված չորացրած եւ բոված *Theobroma cacao L.* կակաոյի ունդերի լուծամզումից, որոնց թեփի մի մասը հեռացվել է | Հում սպիտակուց, հում թաղանթանյութ |

2.33 | Կակաոյի թաղանթներ | *Theobroma cacao L.*-ի չորացրած եւ բոված ունդերի արտաքին ծածկույթներ | Հում թաղանթանյութ |

### 3. ԸՆԴԵՂԵՆ, ՄԹԵՐՔՆԵՐ ԵՎ ԵՆԹԱՄԹԵՐՔՆԵՐ ԸՆԴԵՂԵՆԻՑ

Համարը | Անվանումը | Նկարագրությունը | Պարտադիր հայտարարագրերը |

(1) | (2) | (3) | (4) |

3.01 | Սիսեռ | *L. սովորական սիսեռի սերմեր* | |

3.02 | Գուարային այլուր, լուծամզված | «*Cyanopsis tetragonoloba (L.) Taub*»-ի սերմերից բուսական ծագման սուսինձների լուծամզումից հետո ստացված ենթամթերք: Հում սպիտակուց

3.03 | Էրվիլ | Կանադական ոսպի սերմեր (*Ervum ervilia L.*) | |

3.04 | Տափոլոռ ցանովի [17] | Ցանքի տափոլոռի (*Lathyrus sativus L.*) սերմեր՝ հանձնված համապատասխան ջերմամշակման | |

3.05 | Ոսպ | «*Lens culinaris a.o. Medik*»-ի սերմեր *Medik* | |

3.06 | Քաղցր լյուպին | «*Lupinus ssp.*»-ի սերմեր՝ դառը սերմերի չափաբաժնի քիչ քանակությամբ | |

3.07 | Լոբի, բոված | Լոբու (*Phaseolus*) կամ պորտիկ՝ չինականի (*Vigna ssp.*) սերմերի՝ հանձնված համապատասխան ջերմամշակման թունավոր լեկտինների ոչնչացման նպատակով | |

3.08 | Ոլոռ | Ոլոռի (*Pisum ssp.*) սերմեր | |

3.09 | Լոբու մանրուք | Ոլոռի այլուրի արտադրության ընթացքում ստացված ենթամթերք: Այն բաղկացած է հիմնականում շաքիլի մասնիկներից եւ քիչ քանակությամբ թաղանթներից | Հում սպիտակուց, հում թաղանթանյութ |

3.10 | Լոբու թեփ | Ոլոռի սննդայլուրի արտադրության ընթացքում ստացված ենթամթերք: Այն կազմված է գլխավորապես ոլոռների թաղանթազատման եւ մաքրման ընթացքում հեռացված թաղանթներից | հում թաղանթանյութ |

3.11 | Բակլա | «*Vicia faba L. ssp. faba var. equina Pers.*»-ի եւ «*var. minuta*»-ի (*Alef.*) սերմեր: *Mansf.* | |

3.12 | Միագույն ոլոռ | «*Vicia monanthos Desf.*»-ի սերմեր | |

3.13 | Վիկ | Ցանովի վիկի (*Vicia sativa* L. var. *sativa*) եւ այլ տեսակների սերմեր |  
|

#### 4. ՊԱԼԱՐՆԵՐ, ԱՐՄԱՏՆԵՐ, ՄԹԵՐՔՆԵՐ ԵՎ ԵՆԹԱՄԹԵՐՔՆԵՐ ԱՐՄԱՏԱՊՏՈՒՂՆԵՐԻՑ ԵՎ ԱՐՄԱՏՆԵՐԻՑ

Համարը | Անվանումը | Նկարագրությունը | Պարտադիր հայտարարագրերը |  
(1) | (2) | (3) | (4) |

4.01 | (Շաքարի) ճակնդեղի խյուս | Շաքարի արտադրության ենթամթերք, որը բաղկացած է «*Beta vulgaris* L. ssp. *vulgaris* var. *altissima* Doell.» շաքարի ճակնդեղի լուծամզված եւ չորացրած կտորներից: (HCl-ում չլուծվող մոխրի առավելագույն պարունակությունը՝ չոր զանգվածի 4,5 տոկոսը) | HCl-ում չլուծվող մոխրի պարունակությունը, եթե > չոր նյութի 3,5 տոկոսից: Որպես սախարոզ հաշվարկված գումարային շաքարը, եթե > 10,5 %-ից

4.02 | (Շաքարի) ճակնդեղի մելասս | Շաքարի ճակնդեղի արտադրության կամ զտման ընթացքում կուտակված հյութի նստվածքից բաղկացած ենթամթերք | Որպես սախարոզ հաշվարկված գումարային շաքարը, խոնավությունը, եթե > 28 տոկոսից |

4.03 | (Շաքարի) ճակնդեղի խյուս, մելասս | Շաքարի արտադրության ենթամթերք՝ բաղկացած չորացրած ճակնդեղի խյուսից, որին ավելացվել է մելասս: (HCl-ում չլուծվող մոխրի առավելագույն պարունակությունը՝ չոր զանգվածի 4,5 տոկոսը) | Որպես սախարոզ հաշվարկված գումարային շաքարը, HCl-ում չլուծվող մոխրի պարունակությունը, եթե > չոր նյութի 3,5 տոկոսից |

4.04 | (Շաքարի) ճակնդեղի տակուցք | Ալկոհոլի, խմորասնկերի, կիտրոնաթթվի եւ այլ օրգանական նյութերի արտադրության ընթացքում ճակնդեղի մելասսայի ֆերմենտացումից հետո ստացված ենթամթերք | Հում սպիտակուց, խոնավությունը, եթե > 35 տոկոսից |

4.05 | (Ճակնդեղի) Շաքար [18] | Շաքարի ճակնդեղից լուծամզված շաքար | Սախարոզ |



4.06 | Քաղցր կարտոֆիլ (բատատ) | «Ipomoea batatas (L.) Poir»-ի պալարներ՝ անկախ նրանից, թե ինչ վիճակում են ներկայացվում | Օսլա |

4.07 | Մանիոկա [19] | «Manihot esculenta Crantz»-ի արմատներ՝ անկախ նրանից, թե ինչ վիճակում են ներկայացվում: (HCl-ում չլուծվող մոխրի առավելագույն պարունակությունը՝ չոր զանգվածի 4,5 տոկոսը) | Օսլա, HCl-ում չլուծվող մոխրի պարունակությունը, եթե > չոր նյութի 3,5 տոկոսից |

4.08 | Մանիոկայի օսլա [20], ուռչած | Մանիոկայի արմատներից ստացված օսլա, որը մեծ մասամբ ընդարձակվում է համապատասխան ջերմամշակման արդյունքում | Օսլա |

4.09 | Կատոֆիլի խյուս | Կարտոֆիլի օսլայի արտադրության ենթամթերք (Solanum tuberosum L.) | |

4.10 | Կարտոֆիլի օսլա | Տեխնիկապես մաքուր կարտոֆիլի օսլա | Օսլա |

4.11 | Կարտոֆիլի սպիտակուց | Օսլայի արտադրության չորացրած ենթամթերք, որը բաղկացած է հիմնականում սպիտակուցային նյութերից՝ ստացված օսլայի անջատումից հետո | Հում սպիտակուց |

4.12 | Կարտոֆիլի թերթիկներ | Մթերք՝ ստացված լվացված, կեղևահանված կամ չկճպած, շոգեմշակված կարտոֆիլը ռոտացիոն չորացման ենթարկելու միջոցով | Օսլա, հում թաղանթանյութ |

4.13 | Կարտոֆիլի հյութ՝ խտացրած | Կարտոֆիլի օսլայի արտադրության ենթամթերք, որից մասամբ հեռացվել են սպիտակուցները եւ ջուրը | Հում սպիտակուց, հում մոխիր |

4.14 | Նախնական դոնորոզացման ենթարկված կարտոֆիլի օսլա | Մեծ մասամբ ջերմամշակման արդյունքում կարտոֆիլի լուծված օսլայից բաղկացած մթերք | Օսլա |

5. ԱՅԼ ՍԵՐՄԵՐ ԵՎ ՄՐԳԵՐ, ՄԹԵՐՔՆԵՐ ՈՒ ԵՆԹԱՄԹԵՐՔՆԵՐ ԱՅԼ ՍԵՐՄԵՐԻՑ ԵՎ ՄՐԳԵՐԻՑ

Համարը | Անվանումը | Նկարագրությունը | Պարտադիր հայտարարագրերը |

(1) | (2) | (3) | (4) |

5.01 | Եղջերենու պատիճ | Մթերք՝ ստացված *Ceratonia siliqua* L. եղջերածառի չորացրած պտուղների (պատիճներ) մանրացումից, որից սպիտակ ակացիայի հատիկները հեռացվել են | Հում թաղանթանյութ |

5.02 | Ցիտրուսային խյուս | Ցիտրուսային հյութի արտադրության ժամանակ *Citrus* ssp. ցիտրուսային մրգի մամլումից ստացված ենթամթերք | Հում թաղանթանյութ |

5.03 | Մրգի խյուս [21] | Մրգային հյութի արտադրության ժամանակ կորիզավոր կամ հատիկավոր մրգի մամլումից ստացված ենթամթերք | Հում թաղանթանյութ

5.04 | Լոլիկի խյուս | Լոլիկի հյութի արտադրության ժամանակ *Solanum lycopersicum* Karst. լոլիկի մամլումից ստացված ենթամթերք | Հում թաղանթանյութ |

5.05 | Խաղողի կորիզ, լուծամզված | Խաղողի կորիզներից յուղի լուծամզման ընթացքում ստացված ենթամթերք | Հում թաղանթանյութ, եթե > 45 տոկոսից |

5.06 | Խաղողի խյուս | Ալկոհոլի լուծամզումից հետո վայրկենապես չորացված խաղողի խյուս, որի դեպքում հնարավորինս հեռացվել է ցողուն եւ կորիզ | Հում թաղանթանյութ, եթե > 25 տոկոսից |

5.07 | Խաղողի կորիզ | Խաղողի խյուսից լուծամզված կորիզներ, որի դեպքում խաղողի յուղը չի հեռացվել | Հում ճարպ, հում թաղանթանյութ, եթե > 45 տոկոսից |

## 6. ՖՈՒՐԱԺ-ԱՆԱՍՆԱԿԵՐ ԵՎ ԿՈՇՏ ԿԵՐԵՐ

Համարը | Անվանումը | Նկարագրությունը | Պարտադիր հայտարարագրերը |

(1) | (2) | (3) | (4) |

6.01 | Առվույտի այլուր [22] | Մթերք՝ ստացված ցանովի առվույտի (*Medicago sativa* L.) եւ *Medicago var. Martyn.*-ի մատղաշ ծիլերի չորացումից եւ աղալուց: Այն կարող է պարունակել մինչեւ 20 տոկոս մատղաշ երեքնուկ կամ այլ ֆուրաժային բույսեր՝ չորացված եւ աղացված առվույտին զուգահեռ | Հում սպիտակուց, հում թաղանթանյութ, HCl-ում չլուծվող մոխիր, եթե > չոր զանգվածի 3,5 տոկոսից |

6.02 | Առվույտի մնացուկներ | Չորացրած ենթամթերք՝ ստացված առվույտի հյութի արտամղման արդյունքում | Հում սպիտակուց |

6.03 | Առվույտի սպիտակուցային կոնցենտրատ | Մթերք՝ ստացված առվույտի խտացված հյութի արհեստական չորացումից, որը ենթարկվել է կենտրոնախուաման (ցենտրիֆուգման) եւ ջերմամշակման՝ սպիտակուցներն արտազատելու համար | Կարոտին, հում սպիտակուց |

6.04 | Երեքնուկի այլուր [22] | Մթերք՝ ստացված *Trifolium spp.*-ի մատղաշ ծիլերի չորացումից եւ աղալուց: Այն կարող է պարունակել մինչեւ 20 տոկոս մատղաշ առվույտ կամ այլ ֆուրաժային բույսեր՝ չորացված եւ աղացված երեքնուկին զուգահեռ | Հում սպիտակուց, հում թաղանթանյութ, HCl-ում չլուծվող մոխիր, եթե > չոր զանգվածի 3,5 տոկոսից |

6.05 | Խոտի այլուր [22] [23] | Մթերք՝ ստացված ֆուրաժային մատղաշ բույսերի չորացումից եւ աղալուց | Հում սպիտակուց, հում մոխիր, HCl-ում չլուծվող մոխիր, եթե > չոր զանգվածի 3,5 տոկոսից |

6.06 | Հացահատիկային ծղոտ [24] | Հացահատիկների ծղոտ | |

6.07 | Հացահատիկային ծղոտ, մշակված [25] | Հացահատիկային ծղոտի համապատասխան մշակումից ստացված մթերք | Նատրիում, եթե մշակված է NaOH-ով |

## 7. ԱՅԼ ԲՈՒՅՍԵՐ, ՄԹԵՐՔՆԵՐ ԵՎ ԵՆԹԱՄԹԵՐՔՆԵՐ ԱՅԼ ԲՈՒՅՍԵՐԻՑ

Համարը | Անվանումը | Նկարագրությունը | Պարտադիր հայտարարագրերը |

(1) | (2) | (3) | (4) |

7.01 | (Շաքարի) շաքարեղեգի մելասա | *Saccharum officinarum L.* շաքարեղեգից շաքարի արտադրության կամ գտման ընթացքում կուտակված հյութի նստվածքից բաղկացած ենթամթերք | Որպես սախարոզ հաշվարկված գումարային շաքարը, խոնավությունը, եթե > 30 տոկոսից |

7.02 | (Շաքարի) շաքարեղեգի տակուցք | Ալկոհոլի, խմորասնկերի, կիտրոնաթթվի եւ այլ օրգանական նյութերի արտադրության ընթացքում շաքարեղեգի մելասայի ֆերմենտացումից հետո ստացված ենթամթերք | Հում սպիտակուց, խոնավությունը, եթե > 35 տոկոսից |

7.03 | (Շաքարեղեգ) Շաքար [26] | Շաքարեղեգից լուծամզված շաքար | Սախարոզ |

7.04 | Ծովային ջրիմուռի այլուր | Ծովային ջրիմուռի, մասնավորապես՝ շագանակագույն ջրիմուռի չորացումից եւ մանրացումից ստացված մթերք: Այս մթերքը կարող է վացված լինել՝ յոդի քանակությունը կրճատելու համար | Հում մոխիր |

## 8. ԿԱԹՆԱՅԻՆ ՄԹԵՐՔՆԵՐ

Համարը | Անվանումը | Նկարագրությունը | Պարտադիր հայտարարագրերը |  
(1) | (2) | (3) | (4) |

8.01 | Յուղազերծված կաթի փոշի | Կաթի չորացումից ստացված մթերք, որի յուղի մեծ մասն անջատվել է | Հում սպիտակուց, խոնավությունը, եթե > 5 տոկոսից |

8.02 | Պախտայի փոշի | Կարագի հարելուց հետո գոյացած հեղուկի չորացումից ստացված մթերք | Հում սպիտակուց, հում ճարպ, Լակտոզա, խոնավությունը, եթե > 6 տոկոսից |

8.03 | Շիճուկի փոշի | Պանրի, կաթնաշոռի եւ կազեինի պատրաստումից կամ համանման գործընթացներից հետո գոյացած հեղուկի չորացումից ստացված մթերք | Հում սպիտակուց, Լակտոզա, խոնավությունը, եթե > 8 տոկոսից, հում մոխիր |

8.04 | Շիճուկի փոշի | Մթերք՝ ստացված շիճուկի չորացումից, որից մասամբ հեռացվել է լակտոզան | Հում սպիտակուց, Լակտոզա, խոնավությունը, եթե > 8 տոկոսից, հում մոխիր |

8.05 | Շիճուկի սպիտակուցի փոշի [27] | Քիմիական կամ ֆիզիկական մշակմամբ շիճուկից կամ կաթից լուծամզված սպիտակուցային միացությունների չորացումից ստացված մթերք | Հում սպիտակուց, խոնավությունը, եթե > 8 տոկոսից |

8.06 | Կազեինի փոշի | Մթերք՝ ստացված սերը քաշած կաթից կամ պախտայից՝ չորացնելով թթուների կամ գալիումի միջոցով արտազատված կազեինը | Հում սպիտակուց, խոնավությունը, եթե > 10 տոկոսից |

8.07 | Լակտոզային փոշի | Կաթից կամ շիճուկից անջատված շաքարը՝ զտման եւ չորացման միջոցով | Լակտոզա, խոնավությունը, եթե > 5 տոկոսից |

## 9. ՑԱՄԱՔԱՅԻՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻՑ ՍՏԱՅՎԱԾ ԱՐՏԱԴՐԱՆՔ

Համարը | Անվանումը | Նկարագրությունը | Պարտադիր հայտարարագրերը |

(1) | (2) | (3) | (4) |

9.01 | Մսայուր [28] | Տաքարյուն ցամաքային կենդանիների ամբողջական մասի կամ մի որոշ մասի ջերմամշակումից, չորացումից եւ աղալուց ստացված մթերք, որի դեպքում ճարպը մասնակիորեն կարող է լուծամզվել կամ հեռացվել: Այս մթերքը պետք է մեծ մասամբ զերծ լինի սմբակներից, եղջյուրներից, ստեւից, մազից եւ փետուրներից, ինչպես նաեւ մարսողական տրակտի պարունակությունից (հում սպիտակուցի նվազագույն քանակը՝ 50 տոկոս չոր զանգվածում): (Գումարային ֆոսֆորի առավելագույն քանակը՝ 8 տոկոս) | Հում սպիտակուց, հում ճարպ, հում մոխիր, խոնավությունը, եթե > 8 տոկոսից |

9.02 | Մսաոսկրային այուր [28] | Տաքարյուն ցամաքային կենդանիների ամբողջական մասի կամ մի որոշ մասի տաքացումից, չորացումից, եւ աղալուց ստացված մթերք, որի դեպքում ճարպը կարող է մասնակիորեն լուծամզվել կամ հեռացվել: Այս մթերքը պետք է մեծ մասամբ զերծ լինի սմբակներից, եղջյուրներից, ստեւից, մազից եւ փետուրներից, ինչպես նաեւ մարսողական տրակտի պարունակությունից | Հում սպիտակուց, հում ճարպ, հում մոխիր, խոնավությունը, եթե > 8 տոկոսից |

9.03 | Ոսկրայուր | Տաքարյուն ցամաքային կենդանիների ոսկորների ջերմամշակումից, չորացումից եւ աղալուց ստացված մթերք, որի դեպքում ճարպի մեծ մասը լուծամզվել կամ հեռացվել է: Այս մթերքը պետք է մեծ մասամբ զերծ լինի սմբակներից, եղջյուրներից, ստեւից, մազից եւ փետուրներից, ինչպես նաեւ մարսողական տրակտի պարունակությունից | Հում սպիտակուց, հում մոխիր, խոնավությունը, եթե > 8 տոկոսից |

9.04 | Ճարպատակուցք | Կենդանական ճարպի, խոզի ճարպի եւ լուծամզված կամ ֆիզիկական միջոցներով հեռացված կենդանական ծագում ունեցող այլ

ճարպերի արտադրության մնացորդային մթերք | Հում սպիտակուց, հում ճարպ, խոնավությունը, եթե > 8 տոկոսից |

9.05 | Թռչնամսի ալյուր [28] | Սպանված ընտանի թռչնի ենթամթերքի ջերմամշակումից, չորացումից եւ աղացումից ստացված մթերք: Մթերքը պետք է մեծ մասամբ զերծ լինի փետուրներից | Հում սպիտակուց, հում ճարպ, հում մոխիր, HCl-ում չլուծվող մոխրի պարունակությունը, եթե > 3,3 տոկոսից, խոնավությունը, եթե > 8 տոկոսից |

9.06 | Փետուրի ալյուր՝ հիդրոլիզի ենթարկված | Ընտանի թռչնի փետուրների հիդրոլիզացումից, չորացումից եւ աղալուց ստացված մթերք | Հում սպիտակուց, HCl-ում չլուծվող մոխրի պարունակությունը, եթե > 3,4 տոկոսից, խոնավությունը, եթե > 8 տոկոսից |

9.07 | Արյան ալյուր | Սպանված տաքարյուն կենդանիների արյան չորացումից ստացված մթերք: Մթերքը պետք է մեծ մասամբ զերծ լինի օտար խառնուրդներից | Հում սպիտակուց, խոնավությունը, եթե > 8 տոկոսից |

9.08 | Կենդանական ճարպ [29] | Ցամաքային տաքարյուն կենդանիների ճարպից կազմված մթերք | Խոնավությունը, եթե > 1 % |

10. ՁՈՒԿ, ԾՈՎԱՅԻՆ ԱՅԼ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ, ՄԹԵՐՔՆԵՐ ԵՎ ԵՆԹԱՄԹԵՐՔՆԵՐ ՁԿՆԵՐԻՑ ԵՎ ԾՈՎԱՅԻՆ ԱՅԼ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻՑ

Համարը | Անվանումը | Նկարագրությունը | Պարտադիր հայտարարագրերը |

(1) | (2) | (3) | (4) |

10.01 | Ձկնալյուր [30] | Մթերք՝ ստացված ձուկն ամբողջությամբ կամ դրա որոշ մասեր մշակելու արդյունքում, որի դեպքում ձկան յուղի մի մասը կարող է հեռացվել եւ կարելի է ավելացնել լուծվող ձկնամթերք/ձկնային հիդրոլիզատներ | Հում սպիտակուց, հում ճարպ, հում մոխիր, եթե > 20 տոկոսից, խոնավությունը, եթե > 8 տոկոսից |

10.02 | Լուծվող ձկնամթերք/ձկնային հիդրոլիզատներ, խտացրած | Մթերք՝ ստացված ձկնալյուրի արտադրության ընթացքում, որն անջատվել եւ կայունացվել է թթվեցմամբ կամ չորացմամբ | Հում սպիտակուց, հում ճարպ, խոնավությունը, եթե > 5 տոկոսից |

10.03 | Ձկան յուղ | Ձկից կամ ձկան մասերից ստացված յուղ | Խոնավությունը, եթե  $> 1$  տոկոսից |

10.04 | Ձկան յուղ, զտված, կոշտացված | Ձկից կամ ձկան մասերից ստացված յուղ, որը զտվել է ենթարկվել է ջրածնավորման | Յոդի համարը, խոնավությունը, եթե  $> 1$  տոկոսից |

## 11. ՀԱՆՔԱՆՅՈՒԹԵՐ

Համարը | Անվանումը | Նկարագրությունը | Պարտադիր հայտարարագրերը |

(1) | (2) | (3) | (4) |

11.01 | Կալցիումի կարբոնատ [31] | Կալցիումի կարբոնատի աղբյուրների, ինչպես օրինակ՝ կրաքարի, ուստրեի կամ միդիայի խեցու աղացվածքից կամ թթվի լուծույթով նստեցումից ստացված մթերք | HCl-ում չլուծվող կալցիումի մոխիր, եթե  $> 5$  տոկոսից |

11.02 | Կալցիումի եւ մագնեզիումի կարբոնատ | Կալցիումի կարբոնատի եւ մագնեզիումի կարբոնատի բնական խառնուրդ | Կալցիում, Մագնեզիում |

11.03 | Կրաքարային ծովային ջրիմուռներ (Maerl) | Բնական ծագմամբ արտադրանք՝ ստացված կրաքարային ջրիմուռներից, աղացված կամ հատիկավորված | Կալցիում, HCl-ում չլուծվող մոխիր, եթե  $> 5$  տոկոսից |

11.04 | Մագնեզիումի օքսիդ | Տեխնիկապես մաքուր մագնեզիումի օքսիդ (MgO) | Մագնեզիում |

11.05 | Մագնեզիումի սուլֆատ | Տեխնիկապես մաքուր մագնեզիումի սուլֆատ (MgSO<sub>4</sub> 7H<sub>2</sub>O) | Մագնեզիում, ծծումբ |

11.06 | Կալցիումի ֆոսֆատ 2-փոխարինված [32] | Ոսկրերից կամ անօրգանական աղբյուրներից ստացված նստվածքային կալցիումի մոնոհիդրոֆոսֆատ (CaHPO<sub>4</sub> H<sub>2</sub>O) | Կալցիում, ընդհանուր ֆոսֆոր |

11.07 | Կալցիումի ֆոսֆատ 1-եւ 2-փոխարինված | Քիմիական եղանակով ստացված մթերք՝ բաղկացած դիկալցիում ֆոսֆատի եւ մոնոկալցիում ֆոսֆատի հավասար չափաբաժիններից (CaHPO<sub>4</sub> -Ca(H<sub>2</sub>PO<sub>4</sub>)<sub>2</sub> H<sub>2</sub>O) | Ընդհանուր ֆոսֆոր, կալցիում |

11.08 | Ֆտորազերծված ապարային ֆոսֆատ | Մթերք՝ ստացված մաքրված եւ պատշաճորեն ֆտորազերծված բնական ֆոսֆատների աղացվածքից | Ընդհանուր ֆոսֆոր, կալցիում |

11.09 | Ժելատինազերծված ոսկրային այլուր | Ժելատինազերծված, մանէազերծված եւ աղացված ոսկրեր, որոնց ճարպը հեռացվել է | Ընդհանուր ֆոսֆոր, կալցիում |

11.10 | Կալցիումի ֆոսֆատ 1-փոխարինված | Տեխնիկապես մաքուր *calcium-bis* (dihydrogenphosphate) ( $\text{Ca}(\text{H}_2\text{PO}_4)_2 \times \text{H}_2\text{O}$ ) | Ընդհանուր ֆոսֆոր, կալցիում |

11.11 | Կալցիում-մագնեզիում ֆոսֆատ | Տեխնիկապես մաքուր կալցիում-մագնեզիում ֆոսֆատ | Կալցիում, մագնեզիում, ընդհանուր ֆոսֆոր |

11.12 | Ամոնիումի ֆոսֆատ 1-փոխարինված | Տեխնիկապես մաքուր ամոնիումի ֆոսֆատ 1-փոխարինված ( $\text{NH}_4\text{H}_2\text{PO}_4$ ) | ընդհանուր ազոտ, ընդհանուր ֆոսֆոր |

11.13 | Նատրիումի քլորիդ [31] | Տեխնիկապես մաքուր նատրիումի քլորիդի կամ նատրիումի քլորիդի բնական աղբյուրների, ինչպես օրինակ՝ (ապարային) եւ (ծովային) աղի աղացվածքի հաշվին ստացված մթերք | Նատրիում |

11.14 | Մագնեզիումի պրոպիոնատ | Տեխնիկապես մաքուր մագնեզիումի պրոպիոնատ | Մագնեզիում |

11.15 | Մագնեզիումի ֆոսֆատ | Տեխնիկապես մաքուր մագնեզիումի ֆոսֆատից բաղկացած մթերք ( $\text{MgHPO}_4 \times \text{H}_2\text{O}$ ) | Գումարային ֆոսֆոր, մագնեզիում |

11.16 | Նատրիումի, կալցիումի, մագնեզիումի ֆոսֆատ | Նատրիումի, կալցիումի, մագնեզիումի ֆոսֆատից բաղկացած մթերք | Գումարային ֆոսֆոր, մագնեզիում, կալցիում, նատրիում |

11.17 | Նատրիումի ֆոսֆատ 1՝փոխարինված | Տեխնիկապես մաքուր նատրիումի ֆոսֆատ 1՝ փոխարինված ( $\text{NaH}_2\text{PO}_4 \times \text{H}_2\text{O}$ ) | Գումարային ֆոսֆոր, նատրիում |

11.18 | Նատրիումի բիկարբոնատ | Տեխնիկապես մաքուր նատրիումի բիկարբոնատ ( $\text{NaHCO}_3$ ) | Նատրիում |



## 12. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Համարը | Անվանումը | Նկարագրությունը | Պարտադիր հայտարարագրերը |

(1) | (2) | (3) | (4) |

12.01 | Հացաբուլկեղենից եւ մակարոնեղենից ստացված մթերքներ եւ ենթամթերքներ [33] | Հացի, այդ թվում՝ նրբաբլիթների, բիսկվիտի կամ մակարոնեղենի արտադրությունից ստացված մթերք կամ ենթամթերք | Օսլա, որպես սախարոզ հաշվարկված գումարային շաքար |

12.02 | Հրուշակեղենային մթերքներ եւ ենթամթերքներ [33] | Հրուշակեղենի, այդ թվում՝ շոկոլադի արտադրությունից ստացված մթերք կամ ենթամթերք | Որպես սախարոզ հաշվարկված գումարային շաքարը |

12.03 | Մակարոնեղենի եւ պաղպաղակի պատրաստումից ստացված մթերքներ ու ենթամթերքներ [33] | Խմորեղենի, տորթերի կամ պաղպաղակի արտադրությունից ստացված մթերք կամ ենթամթերք | Օսլա, սախարոզի տեսքով արտահայտված գումարային շաքարը, հում ճարպ |

12.04 | Ճարպաթթուներ | Խիտ հիմնային լուծույթի կամ չհստակեցված՝ բուսական կամ կենդանական ծագում ունեցող յուղերի եւ ճարպերի թորման միջոցով թթվայնության աստիճանի նվազման ընթացքում ստացված ենթամթերք | Հում ճարպ, խոնավություն, եթե  $> 1$  տոկոսից |

12.05 | Ճարպաթթուների աղեր [34] | Կալցիումով, նատրիումով կամ կալիումի հիդոքսիդով ճարպաթթուների օճառացումից ստացված մթերք | Հում ճարպ, Ca (կամ Na կամ K, անհրաժեշտության դեպքում) |

## 13. ՖԵՐՄԵՆՏԱՑՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՑՆԵՐԻՑ ԵՎ ԱՄՈՆԻՈՒՄԻ ԱՂԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՄԹԵՐՔՆԵՐ ԵՆԹԱՄԹԵՐՔՆԵՐ

2 | 3 | 4 |

Մթերքի անվանումը | Սննդարար տարրերի անվանումը կամ միկրոօրգանիզմի բնույթը | Կուլտուրաների սուբստրատ (հատկորոշումներ, եթե այդպիսիք կան) |

1.1.1.1.Խմորման սպիտակուցային արտադրանք, որն ստացվել է մեթանոլի նկատմամբ կիրառելով *Methylophilus methylotrophus* բակտերիայի կուլտուրա | *Methylophilus methylotrophus* NCIB շղթա 10.515 | Մեթանոլ |

1.1.2.1.Ֆերմենտացման սպիտակուցային արտադրանք՝ ստացված բնական գազից, որի դեպքում կիրառվել են բակտերիաների հետեյալ կուլտուրաները. *Methylococcus capsulatus* (Bath), *Alcaligenes acidovorans*, *Bacillus brevis et Bacillus firmus*, որոնց բջիջները ոչնչացվել են | *Methylococcus capsulatus* (Bath) NCIMB շղթա11132, *Alcaligenes acidovorans* NCIMB շղթա 12387, *Bacillus brevis* շղթա NCIMB strain 13288, *Bacillus firmus* շղթա NCIMB շղթա 13280 | Բնական գազ՝ (մեթան՝ մոտ 91 տոկոս, էթան՝ 5 տոկոս, պրոպան՝ 2 տոկոս, իզոբուտան՝ 0,5 տոկոս, n-բութան՝ 0,5 տոկոս, այլ բաղադրիչներ՝ 1 տոկոս), ամոնիակ, հանքային աղեր |

Բոլոր տեսակների խմորասնկերը՝ ստացված համապատասխանաբար 3-րդ և 4-րդ սյունակներում թվարկված միկրոօրգանիզմներից և սուբստրատներից, որոնց բջիջները ոչնչացվել են — | Սախարոմիցես ցեռեիզիե (*Saccharomyces cerevisiae*), Սախարոմիցես կարլսբերգիենսիս Կլուիվերոմիցես ֆրագիլիս (*Saccharomyces carlsbergiensis Kluyveromyces fragilis*), Կլուիվերոմիցես ֆրագիլիս Կանդիդա գիլլերմոնսի (*Kluyveromyces fragilis Candida guilliermondii*) | Մելասս, թորվածքային մնացորդներ, օսլա պարունակող հացահատիկներ և մթերքներ, մրգահյութ, շիճուկ, կաթնաթթու և հիդրոլիզացված բանջարեղենային թաղանթանյութ |

1.4.1.1.Միցելիում, պենիցիլինի արտադրության խոնավ ենթամթերք՝ սիլոսացված Լակտոբացիլուս բրեիսի (*Lactobacillus brevis*), պլանտարումի (*Lactobacillus plantarum*), սակեի (*sake*), կոլենոիդեսի (*collenoides*) և Ստրեպտոկոկկուս լակտիսի (*Streptococcus lactis*) միջոցով՝ ապաստիվացնելու պենիցիլինը, ջերմամշակված | Ազոտածին միացություն Պենիցիլիում կրիսոգենում (*Penicillium chrysogenum*) ATCC 48271 | Կարբոհիդրատների և դրանց հիդրոլիզատների տարբեր աղբյուրներ |

2.2.1.Ամոնիումի լակտատ՝ ստացված լակտոբացիլուս բուլգարիկուսով կատարված ֆերմենտացումից |  $\text{CH}_3\text{CHOHCOONH}_4$  | Շիճուկ |

2.2.2.Ամոնիումի ացետատ՝ ջրային լուծույթում |  $\text{CH}_3\text{COONH}_4$  | — |

2.2.3. Ամոնիումի սուլֆատ՝ ջրային լուծույթում |  $(\text{NH}_4)_2\text{SO}_4$  | — |

2.3.1. Խտացված (կոնցենտրացված) հեղուկ ենթամթերքներ *L* գլյուտամինային թթվի արտադրությունից՝ ստացված ֆերմենտացման արդյունքում կորինեբակտերիում մեթասեկոլայի միջոցով | Ամոնիումի աղեր եւ այլ ազոտածին միացություններ | Սախարոզա, մելասա, օսլայի մթերքներն ու դրանց հիդրոլիզատները |

2.3.2. Խտացված (կոնցենտրացված) հեղուկ ենթամթերքներ *L-lysine* մոնոհիդրոքլորիդի արտադրությունից՝ ստացված ֆերմանտացման արդյունքում բրեվիբակտերիում լակտոֆերմենտումի միջոցով | Ամոնիումի աղեր եւ այլ ազոտածին միացություններ | Սախարոզա, մելասա, օսլայի մթերքներ եւ դրանց հիդրոլիզատները |

[1] Գերմաներենում «Konzentrieren»-ը կարող է հարկ եղած դեպքում փոխարինվել «Eindicken»-ով, եւ այդ պարագայում ընդհանուր հատկորոշիչը պետք է լինի «eingedickt»-ը:

[2] «Կեղեւազատում»-ը կարող է հարկ եղած դեպքում փոխարինվել «թաղանթազատում» կամ «թեփահանում» բառերով, որի պարագայում ընդհանուր հատկորոշիչը պետք է լինի «թաղանթազատված» կամ «թեփահանված»:

[3] Ֆրանսերենում կարող է օգտագործվել «issues» անվանումը:

[4] «Pressage»-ը ֆրանսերենում կարող է անհրաժեշտության դեպքում փոխարինվել «Extraction mécanique» արտահայտությամբ:

[5] Հարկ եղած դեպքում «expeller» բառը կարող է փոխարինվել «cake»-ով:

[6] Գերմաներենում կարող են օգտագործվել «aufgeschlossen» հատկորոշիչը եւ «Quellwasser» անվանումը (նկատի ունենալով օսլա):

[7] Ավելի քան 40 տոկոս օսլա պարունակող արտադրանքը կարելի է որակել որպես «օսլայով հարուստ»: Գերմաներենում դրանք կարող են կոչվել «Roggennachmehl»:

[8] Ավելի քան 40 տոկոս օսլա պարունակող արտադրանքը կարելի է որակել որպես «օսլայով հարուստ»: Գերմաներենում դրանք կարող են կոչվել «Weizennachmehl»:

[9] Եթե այս բաղադրամասը ենթարկվել է առավել մանր աղացման, ապա «մանր» բառը կարող է ավելացվել անվանմանը կամ անունը կարող է փոխարինվել համապատասխան անվանմամբ:

[10] Ավելի քան 40 տոկոս օսլա պարունակող արտադրանքը կարելի է որակել որպես «օսլայով հարուստ»: Գերմաներենում դրանք կարող են կոչվել «Maisnachmehl»:

[11] Այս անվանումը կարող է փոխարինվել «հացահատիկային մշակաբույսի սնձանից ստացված կեր» բառով:

[12] Այս անվանումը կարող է փոխարինվել «մամլված եգիպտացորենի օսլա» բառով:

[13] Անվանումը կարող է լրացվել՝ ներմուծելով նշում հատիկավոր կուլտուրաների մասին:

[14] Այս անվանումը կարող է փոխարինվել «դիստիլատորներ» չորացրած հատիկներ եւ լուծիչներ» բառերով: Անվանումը կարող է լրացվել՝ նշում կատարելով հատիկավոր կուլտուրաների մասին:

[15] Անհրաժեշտության դեպքում կարելի է նշում ավելացնել՝ «գլյուկոզինոլատի ցածր պարունակությամբ»: «Գլյուկոզինոլատի ցածր պարունակությամբ» արտահայտությունը մեկնաբանվում է Եվրոպական միություն օրենսդրությամբ տրվող սահմանումով:

[16] Անվանումը պետք է լրացվի՝ նշում կատարելով բուսատեսակների մասին:

[17] Այս անվանումը պետք է լրացվի իրականացված ջերմամշակման բնույթի մասին նշումով:

[18] Այս անվանումը կարող է փոխարինվել «սախարոզ» բառով:

[19] Այս անվանումը կարող է փոխարինվել «տապիոկա» բառով:

[20] Այս անվանումը կարող է փոխարինվել «տապիոկայի օսլա» բառով:

[21] Անվանումը կարող է լրացվել՝ նշում կատարելով մրգերի տեսակների մասին:

[22] «Խոշոր աղացվածքի ալյուր» եզրը կարող է փոխարինվել «մանր աղացվածքի ալյուր» եզրով: Չորացման եղանակը կարող է ավելացվել անվանմանը:

[23] Անասնակերի մշակաբույսերը կարող են ավելացվել անվանման մեջ:

[24] Հացահատիկային մշակաբույսերի տեսակները պետք է նշվեն անվանման մեջ:

[25] Անվանումը պետք է լրացվի իրականացված քիմիական մշակման բնույթի մասին նշումով:

[26] Այս անվանումը կարող է փոխարինվել «սախարոզ» բառով:

[27] Այս անվանումը կարող է փոխարինվել «կաթնային ալբումինի փոշի» բառով:

[28] Չոր զանգվածում ավելի քան 13 տոկոս ճարպ պարունակող արտադրանքը կարելի է որակել որպես «ճարպերով հարուստ»:

[29] Այս անվանումը կարող է լրացվել կենդանական ճարպի տեսակի առավել ճշգրիտ նկարագրությամբ՝ կախված դրա ծագումից կամ արտադրությունից (կենդանական ճարպ, խոզի ճարպ, ոսկրայուղ եւ այլն):

[30] Չոր զանգվածում ավելի քան 75 տոկոս հում սպիտակուց պարունակող արտադրանքը կարելի է որակել որպես «սպիտակուցով հարուստ»:

[31] Աղբյուրի բնույթը կարող է լրացուցիչ նշվել անվանման մեջ կամ փոխարինվել:

[32] Արտադրության գործընթացը կարող է ընդգրկվել անվանման մեջ:

[33] Անվանումը կարող է փոփոխվել կամ լրացվել՝ նշելու համար ագրոսնդային գործընթացը, որից ստացվել է կերային նյութը:

[34] Անվանումը կարող է լրացվել՝ նշում կատարելով ստացված աղի մասին: